ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-25/34 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

9 հունիսի 2025թ. ժամը 15:00

գ. Աշոցք

Մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Համլետ Ավետիսյան
գնահատող հանձնաժողովի անդամ՝ Արման Նալբանդյան
Բացակայում էր՝
գնահատող հանձնաժողովի անդամ՝ Թադևոս Պողոսյան
գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Էմմա Ղազարյան

ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-25/34 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման, գնահատման և արդյունքների ամփոփման մասին

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-25/34 ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնվելիք կամուրջների գնման գինը, որը 3 հատի համար կազմում էր 4500000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովն արձանագրեց, որ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնման առարկայի բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն հաղորդեց հանձնաժողովի անդամներին գրանցամատյանում կատարված գրառումների մասին: Ըստ այդմ հայտնի դարձավ, որ ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Մասնակցի անվանումը	Հասցե	Հեռախոս
Հայկազ Քյոսաբաբյան Ա/Ձ	ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Խանջյան 29	098 10-33-63

Քարտուղարը գրանցամատյանը և գրանցված հայտերը հանձնեց հանձնաժողովի նախագահին:

Հանձնաժողովը գնահատեց.

1. հայտ պարունակող ծրարը կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին,

2. բացված ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին,

3. մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Ծրարը կազմելու և ներկայացնելու համապատաս-խանությունը հրավերով սահմանված պահանջներին	Ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատաս-խանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին	Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերի համապատաս-խանությունը հրավերի պահանջներին
Հայկազ Քյոսաբաբյան Ա/Ձ	Համապատասխանում է	Համապատասխանում է	Համապատասխանում է

Հաշվի առնելով գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 1

Հայկազ Քյոսաբաբյան Ա/Ձ-ի ներկայացրած հայտը գնահատել բավարար ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-25/34 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկը՝ հիմք ընդունելով տառերով գրվածը: Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը հետևյալն էր.

ՀՀ դրամ

Մասնակից	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1: Կամուրջ			
Հայկազ Քյոսաբաբյան Ա/Ձ	795000	-	795000
Չափաբաժին 2: Կամուրջ			
Հայկազ Քյոսաբաբյան Ա/Ձ	2295000	-	2295000
Չափաբաժին 3: Կամուրջ			
Հայկազ Քյոսաբաբյան Ա/Ձ	1395000	-	1395000

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 2

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-25/34 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել Հայկազ Քյոսաբաբյան Ա/Ձ-ին՝ որպես գնման ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին բավարարող հայտ և գնման գինը չգերազանցող գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 3

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-25/34 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից Հայկազ Քյոսաբաբյան Ա/Ձ -ի հետ կնքել ապրանքի մատակարարման պայմանագիր:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 4

Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ԳՀԱՊՁԲ-25/34 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի անգործության ժամկետ չի սահմանվում և հանձնարարեց քարտուղարին նիստին հաջորդող 4 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակցին ուղարկել ծանուցում՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ _____ Համլետ Ավետիսյան

Հանձնաժողովի անդամ _____ Արման Նալբանդյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Էմմա Ղազարյան